ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2020թ. N 273-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 7/5/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածին, Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 15-ի N 60-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի հոկտեմբերի 19-ի N 33 արձանագրությունը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել հասարակական կառուցապատման նպատակով 2020 թվականի հոկտեմբերի 19-ին կայացած Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 7/5/1 հասցեում գտնվող 10-002-0009-0051 կադաստրային ծածկագրով հողամասի, մակերեսը՝ 745,5 (յոթ հարյուր քառասունհինգ ամբողջ հինգ տասնորդական) քմ, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի հոկտեմբերի 19-ի N 33 արձանագրությունը՝ N 1 լոտով աճուրդի հանված Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 7/5/1 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության հողամասը 926 000 (իննը հարյուր քսանվեց հազար) դրամով վաճառել աճուրդի միակ մասնակից, գնորդ «Ջերսան» ՍՊ ընկերությանը:

2. «Ջերսան» ՍՊ ընկերության հետ, ի դեմս ՍՊԸ տնօրեն Ա. Օհանյանի, օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 հոկտեմբերի 19
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հոկտեմբերի 2020թ. N 274-Ա

ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունում ՀՀ Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի N 1586-Ն որոշմամբ հայտարարված ռազմական դրությամբ պայմանավորված **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Առաջարկել Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցներին Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին ամենամսյա կատարվելիք վճարումների գումարը մինչև սույն տարվա ավարտը վճարելու համապատասխանաբար՝ եռապատիկ և կրկնակի չափով:

2. Ֆինանսական բաժնին՝ աշխատակիցների կողմից տրված համաձայնության հիման վրա կատարել վճարում:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 հոկտեմբերի 22
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2020թ. N 275-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱԼԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Ալբերտ Գրիգորյանի դիմումը (մտից N 1252, 27.10.2020 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ քաղաքի բնակիչ Ալբերտ Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ քաղաքի Շահումյան 4 տարածքի վրա գտնվող 57 քմ մակերեսով հասարակական նշանակության տարածքին տրամադրել հետևյալ հասցեն.

Ջերմուկ համայնք, քաղաք Ջերմուկ, Շահումյան փողոց 4/85 տարածք :

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունմանը հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 հոկտեմվերի 27
Ջերմուկ